«Հաստատում եմ»
ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիսար՝
[redacted]

ՀՐԱՀԱՆԳ № 127

ՊԵՏԱԿԱՆ «ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ» (ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ԻՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Հրապարակվում է ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի փոխառության բաց թողման մասին վորոշման հիման վրա)

I. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. «Յերկրորդ հնգամյակի փոխառության» (յերկրորդ տարվա բաժին) իրացման կամպանիան պիտի տարվի մասսայական-քաղաքական աշխատանքների լայն ծավալման և փոխառության մեջ յուրաքանչյուր աշխատավորի կամավոր մասնակցության հիման վրա: Արդելվում է փոխառության իրացման գործում կիրառել վորևե վարչական հարկադրական միջոց:

Փոխառության հաջող իրացման խնդիրը պահանջում է գյուղական ամբողջ հասարակության և գյուղական ամբողջ ապագա բոլշևիկական կազմակերպվածության, կոլտնտեսականների և աշխատավոր մենանտեսների լայն մասսաների ուշադրության մոբիլիզացիա դեպի փոխառությունը, վճռական հակահարված

գասակարգային թշնամական կուլակային տարրերին և նրանց հակահեղափոխական ագիտացիային ընդդեմ փոխառության:

Կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների մեջ տարվող փոխառության աշխատանքներում (բաժանեգրության ընդունում, մուծումների հավաքում, հաշվառում և հաշվարկում) պիտի ընդգրկվեն ստուգված, սոցիալիզմի գործին նվիրված կոլտնտեսականները, կոլտնտեսուհիները և գյուղական ակտիվիստները:

2. Փոխառության իրացումը կոլտնտեսականների մեջ տարվում է «յերեք շաբաթվա յեկամուտը յերկրորդ հնգամյակի, յերկրորդ տարվա փոխառությանը. փոխառությունը չբաժանեգրված վոչ մի կոլտնտեսական և վոչ մի կոլտնտեսուհի» նշանաբանի տակ:

Յեկամուտ ասելով հասկացվում է կոլտնտեսականի տնտեսության հանրայնացված և չհանրայնացված մասի ընդհանուր յեկամուտը:

3. Մենատնտես աշխատավոր գյուղացիության մեջ փոխառության իրացումը տարվում է «աշխատավոր մենատնտեսներ! հավասարվեցեք կոլտնտեսականներին! յերեք շաբաթվա յեկամուտը յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա փոխառությանը» նշանաբանի տակ:

4. Փոխառության իրացման ստուգիչ թվերը գյուղում հասցվում են միայն մինչև գյուղխորհուրդները: Արգելվում է հասցնել ստուգիչ թվերը մինչև կոլտնտեսությունները, կոլտնտեսականները և առանձին անհատական աշխատավորական տնտեսությունները:

5. «Յերկրորդ հնգամյակի փոխառության» (յերկրորդ տարվա բաժին) կամպանիան սկսվում է 1934 թ. ապրիլի 15-ից: 1934 թվի հունիսի 1-ին բոլոր կոլտնտեսականները պիտի ընդգրկված լինեն փոխառության բաժանեգրության մեջ:

30 JAN 2018

Մինչև 1934 թվի հոկտեմբերի 1-ը լրիվ չափով պիտի վերջանա փոխառության իրացումն աշխատավոր մենատնտեսների մեջ, ընդգրկելով փոխառության մեջ յուրաքանչյուր աշխատավորական տնտեսությանը:

6. Փոխառության կամպանիայի ղեկավարությունը շրջանի տերրիտորիայի վրա իրականացվում է շրջգործկոմի նախագահության կողմից, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների քաղբաժինների ժամանակությամբ:

Փոխառության կամպանիան տարվում է խնայդրամարկղների սիստեմի և պետարկի ու խնայդրամի ժամանակող հանձնաժողովների կողմից, շրջանի պրոֆմիութենական, կոմյերիտական և մյուս հասարակական կազմակերպությունների, ինչպես և համուլի անմիջական մասնակցությամբ:

Խնայդրամարկղները փոխառության աշխատանքները տանում են շրջգործկոմների Ֆինանսական բաժինների ղեկավարությամբ:

Շրջգործկոմները ու շրջֆինբաժինները պարտավոր են տալ փոխառության աշխատանքների մասին սիստեմատիկ հրահանգներ գյուղխորհուրդներին և կոլտնտեսականների վարչություններին և մատակարարել նրանց փոխառության իրացման համար բոլոր տեսակի անհրաժեշտ նյութերով և պարտատոմսերով:

Շրջֆինբաժինների և շրջխնայդրամարկղների ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց վրա—խնայդրամարկղների սիստեմի փոխառության աշխատանքների, փոխառության իրացման պլանի կատարման համար շրջանի տերրիտորիայի վրա, փոխառության միջոցների լրիվ և ժամանակին մուծումների և բաժանորդների սպասարկման համար դրված քի համար:

7. Գյուղխորհուրդները և գյուղական պետական վարկի և խնայդրամի ժամանակող հանձնաժողովները ղեկավարում են փոխառության իրացման կամպանիան

գյուղխորհուրդների տերրիտորիայի վրա, ինչպես կոլտնտեսականների, նույնպես և մենատնտեսների մեջ:

Գյուղխորհուրդները կատարում են պարտատոմսերի վաճառքը մենատնտեսների մեջ և կազմակերպում են կոլտնտեսության վարչության և կոլտնտեսության կից ժամանակող հանձնաժողովի հետ միասին փոխառության բաժնեգրությունը կոլտնտեսականների մեջ, բաժնեգրության մուծումների գանձումը կոլտնտեսականներից և վճարված պարտատոմսերի բաժանումը կոլտնտեսականներին:

Գյուղխորհուրդները տանում են կոլտնտեսականների բաժնեգրության և մուծումների հաշվառումը, ներկայացնում են խնայդրամարկղներին հաշվետու տեղեկություններ կոլտնտեսականների բաժնեգրության մասին, ինչպես և կատարում են խնայդրամարկղների հետ կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ կատարված փոխառության իրացման վերաբերյալ բոլոր հաշվարկումները:

8. Կոլտնտեսությունների վարչությունները ցույց են տալիս ակտիվ ողնություն գյուղխորհուրդներին և կոլտնտեսությունների ժամանակող հանձնաժողովներին, փոխառության վերաբերյալ մասսայական-բացատրական աշխատանքներ տանելու և կոլտնտեսականների մեջ փոխառության բաժնեգրությունն անցկացնելու, ինչպես և կազմակերպելու մուծումների հավաքումը կոլտնտեսականներից և վճարված պարտատոմսերը նրանց հանձնելու համար:

Կոլտնտեսականների մեջ բաժնեգրությունն անցկացնելու, մուծումները նրանցից գանձելու պարտատոմսերը նրանց հանձնելու համար յուրաքանչյուր կոլտնտեսության վարչություն, գյուղխորհուրդի համաձայնությամբ, առանձնացնում է մեկ կամ մի քանի լիազորներ, լիազորներն առանձնացվում են ավելի քան հասարակ-

11-28162թ

կանություն վայելող ակտիվ կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից և կցվում են մուծումների գանձման ամբողջ ժամանակաընթացքում կոլտնտեսականների վրա խմբին, գլխավորապես կոլտնտեսական արտադրական բրիգադային:

Յուրաքանչյուր լիազոր ստորագրում է գյուղխորհրդի պարտավորագիրը ձև № 4 բլանկի վրա յերկու որինակից, վորոնցից մեկը պահվում է գյուղխորհրդում, իսկ մյուսն առձեռն ստանում է լիազորը: Պարտավորագրի մեջ նշված են կոլտնտեսականների մեջ բաժնեգրությունը և մուծումների գանձումները կատարելու վերաբերյալ լիազորի պարտականությունները:

Լիազորները փոխառության աշխատանքների համար ստանում են վարձատրություն (հրահանգի 45-րդ կետը):

Լիազորները պատասխանատու յեն նրանց հանձնարարված փոխառության աշխատանքների համար, ինչպես կոլտնտեսության վարչության նույնպես և գյուղխորհրդի առաջ:

9. Բացի լիազորներից, յուրաքանչյուր կոլտնտեսության վարչություն փոխառության աշխատանքների համար առանձնացնում է վարչության անդամներից վորևե մեկին, վորը պարտավոր է.— ա) ցույց տալ ամենորյա մասնակցություն կոլտնտեսության կից ժամանակող հանձնաժողովի գործնական աշխատանքներին, բ) ղեկավարել լիազորները—բաժնեգրությունն ընդունելու մուծումները հավաքելու վերաբերյալ աշխատանքները, գ) սահմանել հսկողություն լիազորների կողմից մուծումների հավաքման, հավաքած գումարները լիազորի կողմից ժամանակին գյուղխորհրդին հանձնելու և վճարված պարտատոմսերը լրիվ և ժամանակին կոլտնտեսականներին հանձնելու համար:

10. Փոքր, թվով մինչև 50 կոլտնտեսականներ ու-

նեցող կոլտնտեսություններում, փոխառության աշխատանքների համար առանձնացված վարչության անդամին կարելի չե հանձնարարել գյուղխորհրդի հայեցողությամբ—բաժնեգրության կատարումը կոլտնտեսականների մեջ, ինչպես և մուծումների հավաքումը կոլտնտեսականներից: Այդ դեպքում կոլտնտեսության վարչության առանձնացված անդամը հանդիսանում է բաժնեգրության ընդունման և մուծումների հավաքման վերաբերյալ գյուղխորհրդի լիազորը և տալիս է գյուղխորհրդի ձև № 4 պարտավորագիրը (կետ 8):

II. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՋ

Կոլտնտեսականների կոլեկտիվ բաժնեգրության պայմանները

11. Կոլտնտեսությունները պարտատոմսերը ձեռք են բերում կոլեկտիվ բաժնեգրության կարգով:

Բաժնեգրության մեջ պիտի ընդգրկել վոչ թե կոլտնտեսական տնտեսությունը, այլ յուրաքանչյուր կոլտնտեսականին և միայն դրամական արտահայտությամբ: Չի թույլատրվում բաժանորդագրությունն աշխատանքով:

12. Կոլտնտեսականը կարող է իր ցանկությամբ վճարել պարտատոմսերի արժեքը միանվագ, կամ մասամաս ամսական մուծումներով: Կոլտնտեսականները վճարում են մուծումները գյուղխորհրդի լիազորին:

Կոլտնտեսականի յուրաքանչյուր մուծումը, վորպես կարգ պիտի ծածկի մեկ կամ մի քանի պարտատոմսերի արժեքը (5, 10, 20, 25 և այլ ռուբլի):

13. Մասամաս վճարման բաժնեգրության դեպքում, առաջին մուծման վճարումը պիտի կատարվի բաժնեգրության ժամանակ, կամ համենյան դեպս 10 տոկոս վոչ ուշ բաժնեգրությունից հետո:

Մասամաս վճարման տևողությունը սահմանվում է շրջգործկոմի նախագահության կողմից իր շրջանի բոլոր կոլտնտեսությունների համար: Վերջին մուծումը կատարվում է շրջգործկոմի կողմից սահմանված ժամկետին, սակայն վոչ ուշ 1935 թվի հունվարի 1-ից:

14. Արգելվում է կոլտնտեսությունների վարչություններին կոլտնտեսականների բաժնեգրության գումարները վճարել կոլտնտեսության միջոցներից, ինչպես և մարել կոլտնտեսականների մուծումները կոլտնտեսականներին աշխատերով հասանելիք գումարներից պահումներ կատարելու ճանապարհով:

Կոլտնտեսականների մեջ բաժնեգրություն կատարելու և բաժնեգրության մուծումները նրանցից հավաքելու կարգը

15. Կոլտնտեսականների մեջ բաժնեգրությունը կատարելու և նրանցից առաջին մուծումը հավաքելու համար, գյուղխորհուրդը տալիս է կոլտնտեսությունների լիազորներին բաժնեգրման թերթերը (ձև № 1—ա) և հաշվարկային անդորագրերն արմատներով (ձև № 2), վորոնք կազմված են գրքույկի ձևով:

Լիազորն ստանում է անդորագրերը (նրանց արմատները) իրեն ամրացված կոլտնտեսականների քանակի չափով:

Գյուղխորհուրդը պիտի համարակալի անդորագրերը (և նրանց արմատները) լիազորին տրվող յուրաքանչյուր գրքույկի մեջ և գրի գրքույկի շապկի վրա (կամ գրքույկի վերջին արմատի յետևի կողմի վրա), թե քանի համարակալված անդորագրեր և նրանց արմատներ կան գրքույկի մեջ: Լիազորին տրված անդորագրերի (և նրանց արմատների) քանակն ու համարները գյուղխորհուրդը պիտի գրի «անդորագրային գրքույկների հաշ-

վառման տեղեկագիր» դրամարկղային գրքի մեջ (ձև № 10 հաստատված ԽՍՀՄ Ցունխու—յի կողմից):

16. Լիազորները կոլտնտեսականների մեջ բաժնեգրությունը կատարում են կոլտնտեսության օժանդակող հանձնաժողովի ղեկավարությամբ ընդհանուր ժողովում կամ ընդհանուր ժողովից հետո կոլտնտեսականներին անհատորեն դիմելու կարգով:

17. Լիազորն իր խմբի կոլտնտեսականներին մոտենալու ժամանակ պարզում է, թե յուրաքանչյուր կոլտնտեսականն ինչ գումարի պարտատոմսերի յե ցանկանում բաժանորդագրվել:

Հայտնված բաժնեգրության գումարը կոլտնտեսականը մտցնում է բաժնեգրման թերթի մեջ, գրում է այնտեղ իր ազգանունն ու անունը և ստորագրում է հաստատելով իր ստորագրությամբ բաժնեգրության գումարը: Կոլտնտեսականը բաժնեգրման թերթի մեջ ցույց է տալիս, թե փոխառության վոր մասի (անպայման շահող կամ տոկոսաբեր) պարտատոմսերի յե նա բաժանորդագրվում:

Ընդունելով կոլտնտեսականի բաժնեգրությունը, լիազորը լրացնում է նրա համար հաշվարկային անդորրագիրը (և նրա արմատը) № 2 ձևով:

Անդորրագիրը տրվում է առձեռն կոլտնտեսականին վերցնելով նրանից ստորագրություն անդորրագրի արմատի վրա. անդորրագիրը մնում է կոլտնտեսականի մոտ, մինչև բաժնեգրության վերջնական հաշվարկումը: Յուրաքանչյուր մուծումը վճարելու ժամանակ, բաժանորդը ներկայացնում է իր անդորրագիրը լիազորին, մուծման գումարը և ամսաթիվը նրա մեջ գրելու համար:

Մուծումն ստանալուց հետո, անդորրագրերի արմատները լիազորը վերադարձնում է գյուղխորհրդին մինչև հետևյալ հերթական մուծման ժամկետը—պա-

հելու համար: Յուրաքանչյուր հերթական մուծումը հավաքելուց առաջ, գյուղխորհուրդը կրկին տալիս է լիազորին անդորրագրերի արմատները:

18. Բաժանորդից մուծումներն ստանալու ժամանակ լիազորը մուծման վճարված գումարն ու ամսաթիվը գրում է հաշվարկային անդորրագրի և նրա արմատի մեջ (ձև № 2):

Լիազորն անդորրագրի վրա ստորագրում է, հաստատելով դրանով մուծված գումարի ստացումը: Բաժանորդը ստորագրում է արմատի վրա, հաստատելով իր ստորագրությամբ վճարված մուծման գումարն ու ամսաթիվը:

Մուծումների ընդունումը բաժանորդներից առանց գրելու հաշվարկային անդորրագրերի և նրանց արմատների մեջ չի թույլատրվում:

19. Բաժնեգրությունը կատարելու ժամանակ լիազորը լրացնելով բաժնեգրման թերթերն, աստիճանաբար, սակայն վոչ պակաս քան յերկու որը մեկ անգամ ներկայացնում է կոլտնտեսության վարչության անդամին ստուգելու համար:

Ստուգված բաժնեգրման թերթերը լիազորն առանց ուշացնելու հանձնում է գյուղխորհրդին հավաքած դրամների (բաժանորդների առաջին մուծումը) և անդորրագրերի արմատների հետ միասին: Անդորրագրերի արմատներով գյուղխորհուրդը հսկում է լիազորի կողմից հանձնված գումարների ճշտության վրա:

20. Յուրաքանչյուր լիազորի կողմից հանձնված լրացված բաժնեգրման թերթերի և անդորրագրերի արմատների հիման վրա, գյուղխորհուրդը կազմում է հաշվարկային տեղեկագիր (ձև № 5) յուրաքանչյուր կոլտնտեսականի կողմից կատարված մուծման և նրանց հանձնված պարտատոմսերի հաշվառման համար: Հաշ-

վարկային տեղեկագիրը գյուղխորհրդի կողմից տարվում է լիազորին ամրացված կոլտնտեսականների յուրաքանչյուր խմբի համար առանձին:

21. Այն լիազորները, վորոնք աշխատանքները տանում են գյուղխորհրդի բնակավայրում, բաժանորդներից հավաքված հերթական մուծումները հանձնում են գյուղխորհուրդներին, ամեն ար: Մնացած լիազորները գյուղխորհուրդներին հանձնում են հավաքված հերթական մուծումները գյուղխորհրդին առանց ձգձգումների և համենայն դեպս վոչ պակաս քան յերեք որը մեկ անգամ:

Լիազորը հավաքված մուծումները հանձնում է անդորագրերի արմատների հետ միասին, վորոնցով գյուղխորհուրդն ստուգում է մուծումների հանձնված գումարի ճշտությունը: Անդորագրերի արմատներով և գյուղխորհուրդը գրանցում է հաշվարկային տեղեկագրի (ձև № 5) մեջ յուրաքանչյուր բաժանորդի մուծած գումարը և մուծման ամսաթիվը: Անդորագրերի արմատների վրա գյուղխորհուրդը նշանակումներ է անում այն մասին, վոր բաժանորդի մուծված գումարը գրանցված է հաշվարկային տեղեկագրի մեջ:

22. Լիազորները գյուղխորհուրդների ցուցմունքներով հերթական մուծումների հավաքումները կոլտնտեսականներից հավաքում են շրջգործկոմի կողմից սահմանված ժամկետներին (կետ 13): Լիազորներն, ինչպես և վարչության առանձնացված անդամները պարտավոր են հետևել, վորպեսզի բաժանորդները մուծումները վճարելու ժամանակ ստորագրեն անդորագրերի արմատների վրա:

23. Ստանալով լիազորից լրացված բաժնեգրման թերթերը, գյուղխորհուրդը պահում է ամբողջությունը յուրաքանչյուր լիազորի և յուրաքանչյուր կոլտնտեսության համար առանձին, մինչև կոլտնտեսականների բաժնեգրության հաշվարկումների վերջանալը: Հաշ-

վարկային տեղեկագիրը (ձև № 5) և հաշվարկայի անդորագրերի արմատները (ձև № 2) պահվում են գյուղխորհուրդում յերեք տարի ժամանակով:

Վճարված պարտատոմսերի հանձնումը կոլտնտեսություններին

24. Կոլտնտեսականներն իրենց բաժնեգրության վճարած գումարի սահմաններում կարող են ստանալ պարտատոմսեր գյուղխորհրդից, վճարված գումարի չափով: Սկսած 1934 թվի մայիսի 15-ից գյուղխորհուրդը պարտավոր է առանց ձգձգումների տալ պարտատոմսեր այդ կոլտնտեսականներին, նրանց կողմից մուծված գումարի չափով: Գյուղխորհուրդը պարտատոմսերի հանձնումը կատարում է կոլտնտեսականների կողմից հաշվարկային անդորագիրը (ձև № 2) ներկայացնելու ժամանակ: Կոլտնտեսականի կողմից ներկայացված հաշվարկային անդորագիրը համեմատվում է գյուղխորհրդում պահված անդորագրի արմատում և հաշվարկային տեղեկագրում (ձև № 5) կատարված գրանցման հետ:

Կոլտնտեսականի տված պարտատոմսի գումարը և որը, գյուղխորհուրդը գրանցում է կոլտնտեսականի կողմից ներկայացված հաշվարկային անդորագրի, ինչպես և անդորագրի արմատի և հաշվարկային տեղեկագրի (ձև № 5) մեջ: Կոլտնտեսականն ստորագրում է պարտատոմսերն ստանալու մասին անդորագրի արմատի վրա: Գյուղխորհրդի նախագահը կամ քարտուղարը հաստատում են իրենց ստորագրությամբ կոլտնտեսականի հաշվարկային անդորագրի վրա—նրանց հանձնված պարտատոմսերի գումարը:

25. 1934 թ. սեպտեմբերի 1-ին և 1935 թ. հունվարի -ին գյուղխորհուրդը պարտավոր է ստուգել ձև № 5 հաշվարկային տեղեկագրով, թե վոր կոլտնտեսականը

գեռևս չի ստացել վճարած գումարի չափով պարտատոմսեր:

Գյուղխորհուրդը պարտավոր է պարտատոմսերն չստացած կոլտնտեսականներին հանձնել պարտատոմսերն անմիջականորեն, կամ մուծումները հավաքող լիազորի միջոցով: Եթե կոլտնտեսականն ինքն է ներկայանում գյուղխորհուրդ պարտատոմսերն ստանալու համար, ապա պարտատոմսերի հանձնումը նրան ձևակերպվում է 24-րդ կետով սահմանված կարգով:

Եթե պարտատոմսերն հանձնվում են կոլտնտեսականին լիազորների միջոցով, ապա գյուղխորհուրդը տալիս է լիազորին պարտատոմսերի հետ միասին նաև հաշվարկային անդորրագրերի արմատները:

Լիազորը պարտատոմսերը կոլտնտեսականին հանձնելու ժամանակ գրանցում է անդորրագրի արմատի և կոլտնտեսականի կողմից ներկայացվող հաշվարկային անդորրագրի մեջ հանձնված պարտատոմսերի գումարը և հանձնման օրը:

Կոլտնտեսականն ստորագրում է պարտատոմսերը ստանալու մասին հաշվարկային անդորրագրի արմատի վրա, իսկ լիազորը հաստատում է իր ստորագրությամբ հաշվարկային անդորրագրի վրա հանձնված պարտատոմսերի գումարը և օրը:

Պարտատոմսերը բաժանելուց հետո, լիազորը վերադարձնում է գյուղխորհրդին հաշվարկային անդորրագրերի արմատները պարտատոմսերն ստանալու մասին կոլտնտեսականների ստորագրություններով:

Գյուղխորհուրդն ստուգում է յուրաքանչյուր անդորրագրի արմատի վրա կոլտնտեսականների ստորագրությունների առկայությունը ձև № 5 հաշվարկային տեղեկագրի մեջ նշանակում է տրված պարտատոմսերի գումարը և օրը:

26. Եթե պարտատոմսերը չեն հանձնվի, բաժանորդին նրա բացակայության պատճառով (դյուղից հեռացում և այլն) ապա գյուղխորհուրդը պարտավոր է 1935 թվի փետրվարի 15-ից վոչ ուշ վերադարձնել չհանձնված պարտատոմսերը խնայդրամարկղին, պարտատոմսերը չստացող բաժանորդների ցուցակի հետ միասին: Այդ ցուցակում նշվում են— բաժանորդների ազգանուններն ու անունները, բաժնեգրության գումարը (ըստ փոխառության մասերի) և յուրաքանչյուր բաժանորդին չհանձնված պարտատոմսերի գումարը: Ցուցակի հետ միասին գյուղխորհուրդը հանձնում է խնայդրամարկղին հաշվարկային անդորրագրերի արմատները, որոնց վրա գրանցված են այն բաժանորդների հետ կատարված հաշվարկումները, որոնց չեն հանձնված պարտատոմսերը. ցուցակի հիման վրա, խնայդրամարկղը ջնջում է պարտատոմսեր յուրաքանչյուր բաժանորդի համար և պարտատոմսերը բաժանորդի անունով է պահ և վերցնում:

Խնայդրամարկղը ձեռք է առնում բոլոր միջոցները պարտատոմսերը բաժանորդներին հանձնելու համար: Բաժանորդները հետաքրքրում կարող են ստանալ իրենց պարտատոմսերն անմիջականորեն խնայդրամարկղից, կամ գյուղխորհրդի միջոցով, հանձնելով պարտատոմսերի փոխարեն մուծումների վճարումը հաստատող (ձև № 2) անդորրագիրը:

Ինչպես է գյուղխորհուրդը հայտնում խնայդրամարկղին տեղեկություններ կոլտնտեսականների բաժնեգրության մասին

27. Ապրիլի 18-ին, 23-ին և 28-ին, մայիսի 3-ին, 8-ին, 13-ին և 28-ին, իսկ հետո յուրաքանչյուր ամսի 13-ին և 28-ին, գյուղխորհուրդը ներկայացնում է տեղեկություններ խնայդրամարկղին հաշվետու տեղեկություններ № 16-ա ձևով կոլտնտեսականների բաժնեգրության արդյունքների մասին: Այդ տեղեկություններ-

ռում նշված են առանձին յուրաքանչյուր կոլտնտեսության բաժնեգրության դումարը և բաժանորդների քանակը:

Առաջին անգամ ձև № 16-ա տեղեկությունը կազմվում և այսպես.— յուրաքանչյուր կոլտնտեսական բաժնեգրության դումարը հաշվարկային տեղեկագրի մեջ դրանցելուց հետո, (կետ 20) գյուղխորհուրդը հաշվում և բաժնեգրության դումարը և բաժանորդների քանակը յուրաքանչյուր լիազորի հաշվարկային տեղեկագրով: Յուրաքանչյուր կոլտնտեսության բոլոր հաշվարկային տեղեկագրերի դումարները գումարվում են: Ստացված ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության համար առանձին բաժնեգրության ընդհանուր դումարը և բաժանորդների ընդհանուր քանակը— գյուղխորհուրդը գրում է ձև 16-ա հաշվետու տեղեկագրի մեջ:

28. Հետագայում, 27-րդ կետով նշված ժամկետներին հաշվետու տեղեկությունները ներկայացնելիս, գյուղխորհուրդը հաշվում է ըստ յուրաքանչյուր լիազորի հաշվարկային տեղեկագրի նոր բաժնեգրման թերթերով ընդունված բաժնեգրության դումարը և բաժանորդների քանակը:

Յուրաքանչյուր հաշվարկային տեղեկագրի մեջ, նոր ընդունված բաժնեգրության դումարը գրվում է առանձին տողով, որից հետո նույնպես առանձին տողով բաժնեգրության ընդհանուր դումարը և բաժանորդների ընդհանուր քանակը, ակտած կամպանիայի սկզբից: Հաշվարկային տեղեկագրով հանված դումարները հաշվետու ժամանակաշրջանի համար և կամպանիայի սկզբից, գումարվում են ըստ յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության և մտցվում են ձև № 16-ա հերթական տեղեկությունների մեջ:

III. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պարտատոմսերի վաճառման կարգն ու պայմանները մենատնտեսներին

29. Մենատնտեսների մեջ փոխառության իրացման հիմնական մեթոդը հանդիսանում է պարտատոմսերի վաճառքը կանխիկ վճարով, մենատնտեսների կողմից պարտատոմսերի արժեքը միանվագ կամ ճաբման կարգով: Պարտատոմսերի վաճառքը կատարվում է աշխատավոր մենատնտեսներին տնտեսություններն այցելելու միջոցով:

30. Եթե աշխատավոր մենատնտեսը չի կարող մի անգամից վճարել ձեռք բերված պարտատոմսերի արժեքը, ապա նա կարող է վերցնել իր վրա ինքնապարտավորագիր գրավոր ձևով, հայտնված ամբողջ գումարով պարտատոմսերը գնելու այն ժամկետին, որը սահմանված է գյուղխորհրդի կողմից մենատնտեսի հետ յուրաքանչյուր համաձայնությամբ, սակայն վոչ ուշ քան մինչև 1934 թվի հոկտեմբերի 1-ը:

Ինքնապարտավորագիրն ընդունելու հետ միաժամանակ մենատնտեսը մուծում է իր կողմից գնված պարտատոմսերի առաջին ժամկետի արժեքը և ստանում է մուծած դումարի չափով պարտատոմսեր:

32. Մենատնտեսների մեջ պարտատոմսերը վաճառելու համար, գյուղխորհուրդը կոլտնտեսական ակտիվից և գյուղական հասարակայնությունից առանձնացնում է լիազորներ: Յուրաքանչյուր լիազոր ստորագրում է գյուղխորհրդի ձև № 4 պարտավորագիրը յերկու օրինակից, վորոնցից մեկը հանձնվում է լիազորին, իսկ մյուսը պահվում է գյուղխորհրդում: Գյուղխորհուրդն ամրացնում է յուրաքանչյուր լիազորին աշխատանքի համար թղթամասնի՝ մենատնտեսներին պարտատոմսերի

վաճառքը կատարելու համար: Լիազորն աշխատանքները և տանում տարածելու պարտատոմսերն իրեն հատկացված թաղամասում:

33. Լիազորն ստանում է գյուղխորհրդից ավանս պարտատոմսեր մենատնտեսներին վաճառելու համար: Մենատնտեսներին այցելելու ժամանակ, լիազորը բացատրական աշխատանքների հիման վրա, կատարում է պարտատոմսերի վաճառք կանխիկ վճարով, տալով մենատնտեսներին նրանց կողմից մուծած գումարի չափով պարտատոմսեր:

Այն լիազորները, վորոնք փոխառության աշխատանքները տանում են գյուղխորհրդի բնակվայրում, հանձնում են պարտատոմսերի վաճառքից ստացված դրամները գյուղխորհրդին ամեն որ: Մնացած լիազորներն հանձնում են դրամները գյուղխորհրդին առանց ուշացումների, սակայն համենայն դեպս վոչ ուշ քան յերեք որը մեկ անգամ:

IV. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՅԵՎ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՀԵՏ

34. Պարտատոմսերը կոլտնտեսականներին հանձնելու և մենատնտեսներին պարտատոմսերը վաճառելու համար, գյուղխորհուրդն ստանում է խնայդրամարկղից անհրաժեշտ գումարով պարտատոմսեր: Խնայդրամարկղից ստացած պարտատոմսերը գյուղխորհուրդը հաշվի յե առնում ձև № 6 «պարտատոմսերի մուտքի և յելքի» տեղեկագրի մեջ:

Կոլտնտեսականներին և լիազորներին տրվող պարտատոմսերը գյուղխորհուրդը դուրս է գրում, վորպես ծախս ձև № 6 տեղեկագրով, վերցնելով այդ տեղեկա-

գրի վրա լիազորի ստորագրությունը պարտատոմսերն ստանալու մասին: Նույն այդ տեղեկագրով գյուղխորհուրդը մուտք է գրում լիազորի կողմից վերադարձված պարտատոմսերի մնացորդը: Մուտք արված պարտատոմսերի գումարը հաստատվում է գյուղխորհրդի նախագահի կամ քարտուղարի ստորագրությամբ:

35. Յուրաքանչյուր լիազորի հետ կատարված հաշվարկումները հաշվառման յենթարկելու համար, գյուղխորհուրդը բաց է անում «գիրք հաշվետու անձերի, զանազան գումարների և հաշվարկումների» գրքի մեջ յուրաքանչյուր լիազորի համար առանձին անձնական հաշիվ: Այդ անձնական հաշվում գրվում են — լիազորին յուրաքանչյուր անգամ տրված պարտատոմսերի գումարը և լիազորից հետ ստացած պարտատոմսերի մնացորդը, մենատնտեսներին վաճառված պարտատոմսերի գումարը և կոլտնտեսականներին հանձնված պարտատոմսերի գումարը, ինչպես և լիազորից փոխառության դիմաց մուծված յուրաքանչյուր գումարը:

36. Յուրաքանչյուր լիազորից փոխառության դիմաց ստացված դրամական գումարները, գյուղխորհուրդը մուտք է անում դրամական (դրամարկղային) գրքի «այլ գումարներ» սյունակում: Այդ գրքում գրանցումներ կատարելու ժամանակ գյուղխորհուրդը պետք ցույց տա, վոր գումարները մուծվել են կոլտնտեսականների բաժնեգրությունից, վո՞ր կոլտնտեսության, կամ մենատնտեսների պարտատոմսերի վաճառքից:

37. Գյուղական խնայդրամարկղին ամրացված գյուղխորհուրդները հանձնում են այդ դրամարկղին փոխառության դիմաց մուծված բոլոր գումարները վոչ ուշ, քան դրամների մուծման հաջորդ որը:

Շրջխնայդրամարկղին ամրացված գյուղխորհուրդներն ուղարկում են շրջխնայդրամարկղին փոխառության դիմաց մուծված բոլոր գումարները հատուկ մար-

28162գր

գու միջոցով կամ փոստային փոխադրումով յուրաքանչյուր ամսի 3-ին, 8-ին, 13-ին, 18-ին, 23-ին և 28-ին: Գյուղխորհուրդը դրամները հանձնում է խնայդրամարկղին հետևյալ հայտարարությամբ— (գյուղխորհրդի հաշվետվության ձև № 69):

«Ցերկրորդ հնգամյակի փոխառության» (յերկրորդ տարվա բաժին) մասին:

. . . . գյուղխորհրդից
. . . . . ից մինչև . . . . . . 193 թ.
Մենատնտեսներին վաճառված պարտատոմսերից
. . . . ռուբլի
Կոլտնտեսականների բաժնեգրությունից
) . . . . . կոլտնտեսության անդամներից
2) . . . . » » ռուբլի
ռուբլի
և այլն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության
ընդամենը ռուբ.
փոխադրվող ռուբլիների գումարը բառերով . 193 թ.
ստորագրություն:

Դրամը փոստով ուղարկելու դեպքում այդ հայտարարությունը ցույց է տրվում փոստային փոխադրման «դրամով հաղորդումների համար» բլանկի վրա:

Հայտարարությունը կազմվում է գյուղխորհրդի կողմից դրամական (դրամարկղային) գրքի գրանցումների հիման վրա և համեմատվում է «գիրք հաշվետու անձերի, զանազան գումարների հաշվարկումների» գրքի յուրաքանչյուր լիազորի անձնական հաշվի գրանցումների հետ:

Խնայդրամարկղին հանձնված դրամները գյուղխորհուրդը դուրս է գրում, վորպես ծախս դրամական (դրամարկղային) գրքով, նշելով փոստի անդորրագրի համարն ու ամսաթիվը, կամ դրամն ընդունող խնայդրամարկղին:

38. Դրամներն ուղարկելու համար փոստային ծախսերը գյուղխորհուրդը վճարում է ի հաշիվ փոխառության աշխատանքների համար ստացվելիք վարձատրության (տես հրահանգի 45-րդ կետը):

39. Փոխառության պարտատոմսերն, ինչպես և փոխառությունից ստացված դրամները մինչև հանձնումը կամ խնայդրամարկղ ուղարկելը պահվում են գյուղխորհրդում ընդհանուր կարգով, վորը սահմանված է գյուղխորհրդներում դրամներ պահելու համար:

40. Խնայդրամարկղները պարտավոր են ժամանակին մատակարարել նրանց կցված գյուղխորհրդներին հետևյալ գործառնական բլանկներով. ա) կոլտնտեսականների բաժնեգրության թերթեր ձև № 1-ա (ըստ գյուղխորհրդի հաշվառման ձև № 5), բ) Անդորրագրեր և նրանց արմատներ (ըստ խնայդրամարկղների ձև № 2, ըստ գյուղխորհրդի հաշվառման ձև № 57), գ) լիազորների պարտավորագրեր (ձև № 4), դ) կոլտնտեսականների մուծումների հաշվառման հաշվարկային տեղեկագիր (ըստ խնայդրամարկղների ձև № 5, ըստ գյուղխորհրդի հաշվառման ձև № 58), ե) պարտատոմսերի մուտքի և յելքի տեղեկագիր (ըստ խնայդրամարկղների ձև № 6, ըստ գյուղխորհրդի հաշվառման ձև № 59) և զ) կոլտնտեսականների բաժնեգրության մասին հաշվետու տեղեկություններ (ձև № 16-ա):

Ե. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

41. Գյուղխորհուրդը ԽՍՀՄ Ֆինժողկոմատի առաջ կրում է նյութական պատասխանատվություն, գյուղխորհուրդների, ինչպես և նրանց լիազորների կողմից ստացված պարտատոմսերը և դրամները պահելու համար: Լիազորները գյուղխորհուրդների առաջ կրում են գույքային պատասխանատվություն, բաժնեգրությու-

նից, ինչպես և պարտատոմսերի վաճառքից ստացված դրամները պահելու, դրամները ժամանակին գյուղխորհրդին հանձնելու, ինչպես և գյուղխորհրդից ստացված պարտատոմսերը պահելու համար:

6. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ

42. Ոժանդակող հանձնաժողովները, ֆինմարմինները և խնայդրամարկղները կիրառում են խիստ վերահսկողություն փոխառությունից մուծված դրամների վրա, սկսած լիազորներից վերջացնելով խնայդրամարկղները:

Փոխառության հաշվարկումների ժամանակին կատարումն ու ճշտությունը խնայդրամարկղներում ու գյուղխորհուրդներում, ինչպես և լիազորների կողմից դրամների պարբերաբար հանձնումն ստուգելու համար, առանձնացվում են հատուկ բրիգադներ: Շրջֆինբաժնի և շրջխնայդրամարկղի ղեկավարությամբ, բրիգադներն ստուգում են ամբողջ շրջանի փոխառության հաշվարկումների դրությունը: Ինչպես շրջոժանդակող հանձնաժողովները, այնպես և գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների ոժանդակող հանձնաժողովները պիտի ունենան մշտական վերահսկողություն այն բանի վրա, որպեսզի փոխառության դիմաց մուծած դրամները չմնան լիազորների մոտ, գյուղխորհուրդներում և խնայդրամարկղներում, այլ ժամանակին հանձնվեն ՖԺԿ-ի հաշիվը:

7. ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՏՆԱՑՆԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵՋ

43. Գյուղական տնայնա-արհեստագործական արտելների անդամների մեջ տարվում է փոխառության

կոլեկտիվ բաժնեգրություն նույն պայմաններով, ինչ-որ սահմանված են կոլտնտեսականների համար: Մուծումների հավաքումները բաժանորդներից և պարտատոմսերի հանձնումը նրանց, կատարում է գյուղխորհրդի լիազորը, որն առանձնացվում է արտելի վարչության կողմից: Լիազորը փոխառության աշխատանքները տանում է նույն կարգով, ինչ որ կոլտնտեսությունների լիազորները:

8. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԵՋ

44. Գյուղական հիմնարկությունների և ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների մեջ (նույն թվում ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների) կատարվում է փոխառության կոլեկտիվ բաժանորդագրություն նույն պայմաններով, ինչ որ քաղաքի բանվորների և ծառայողների կոլեկտիվներում:

Գյուղական բանվորներն ու ծառայողները բաժանորդագրվում են փոխառության իրենց ոժանդակող հանձնաժողովների միջոցով և վճարում են բաժանորդագրությունն իրենց կոլեկտիվի ադմինիստրացիայի միջոցով մաս-մաս վճարման կարգով մինչև 1935 թվի մարտի 1-ը: Բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժնեգրության կարգն ու պայմանները մասնանշված են ԽՍՀՄ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ «փոխառության իրացման մասին քաղաքային աղքատնակչության մեջ» հրահանգում:

9. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՑԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

45. Փոխառության աշխատանքների համար վարձատրությունը տրվում է կոլտնտեսությունների և տնայ

նագործական արտելների անդամների մեջ բաժնեգրություն կատարող և մուծումները հավաքող գյուղխորհուրդներին և նրանց լիազորներին, վորոնք մենատնտեսների մեջ պարտատոմսերի վաճառք են կատարել: Գյուղխորհուրդը մենատնտեսներին վաճառված պարտատոմսերից ստացված գումարներից ստանում է 1% վարձատրություն և կոլտնտեսականներից ու տնայնագործական արտելների անդամներից բաժնեգրության դիմաց մուծված գումարներից 1/2% վարձատրություն:

Կոլտնտեսականների և տնայնագործական արտելների անդամներից բաժնեգրություն ընդունող և մուծումները հավաքող, ինչպես և մենատնտեսների մեջ պարտատոմսեր վաճառող լիազորներն ստանում են 1% վարձատրություն այն գումարներից, վորոնք փաստորեն հավաքել են յուրաքանչյուր լիազորի կողմից:

Խնայդրամարկղը վճարում է վարձատրությունը գյուղխորհուրդներին և գյուղխորհուրդների ցուցմունքներով լիազորներին—յերկու ժամկետներում. առաջին անգամ 1934 թվի օգոստոսի 1-ին, մինչև այդ մուծված գումարից, յերկրորդ անգամ—փոխառության հաշվարկումները վերջանալուց հետո 1934 թվի օգոստոսի 1-ից մինչև հաշվարկումները վերջանալու որը մուծված գումարներից:

10. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂ ՅԵՎ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

47. Փոխառության մասսայական-քաղաքական լավագույն օրինակների և փոխառության իրացման հաջող արդյունքների համար պարգևատրվում են ոժանդակող հանձնաժողովները, հասարակական կազմակերպությունները, կոլտնտեսությունները, կոլեկտիվները և առանձին ակտիվիստները (ոժանդակող հանձնաժողովի

անդամները, լիազորները, գյուղխորհրդի աշխատակիցները և այլն):

Շրջոժանդակող հանձնաժողովներն հայտնաբերում են փոխառության աշխատանքների լավագույն ոժանդակող հանձնաժողովներին, հասարակական կազմակերպություններին և առանձին կոլեկտիվներին, այդպիսիներին պարգևատրման ներկայացնելու համար: Գյուղխորհուրդներին, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին, ՄՏԿ-ներին և այլն կից ոժանդակող հանձնաժողովներն իրենց հերթին հայտնաբերում են փոխառության աշխատանքների մեջ լավագույն որինակներ ցուցաբերող առանձին ակտիվիստ-հարվածայիններին և ներկայացնում են այդ ակտիվիստներին պարգևատրելու համար:

Պարգևատրման կարգն ու պայմանները սահմանվում են ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից պետվարկին և խնայգործին ոժանդակող կենտրոնական հանձնաժողովի կողմից հատուկ կանոնադրությամբ:

Պետաշխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչության պետ՝ ՄԱԼԱԽՈՎՍԿԻՅ

ՀՀ Ազգային գրադարան
NL0933158

Պետհրատի տպարան — Սրբ. Ռ. Հախվերդյան
Գլավլիտ. № 275 — Պատվեր № 600 — Տիրաժ—2500

11
28162